

ԱՐՏԱԻԱԶԴ Բ,

Հ Ա Յ Ո Յ Վ Ր Ի Ժ Ա Հ Ա Ն

„Արտաւազդ ցայժմ կենդանի կայ,
եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս“ :
ԵԶՆԻԿ, Ա. ԼԵ.

Ա. զանա Մասիս,

Ո՛վ դու Հայոց մեծաց յաւէժ աղբնկալիս,
Մերժէ պահ մը, մերժէ նրսեմ քո ըստուերներ,
Ու մոռթ աչքիս ջահէ փառաց քո փայլակներ :

Ազանա Մասիս,

Թող աննարկեմ իմնայլըս քո խորհրդալիս,
Որ մեծապանծ Հայոց քաջին ծածկին զանուն,
Ապագայիցըս յոյս իծոց վրհիցդ անհուն :

Ազանա Մասիս,

Ո՛վ յաւիտեանց հրսկայդ ահեղ, տէր աշխարհիս,
Կամ երկնապիշ բարձրութենէդ խոնարհէ յիս,
Կամ բարձրացն իմեմոռթիւնդ քընարս ու զիս,

Ազանա Մասիս :

Ա.

Ամառուան խաղաղ եւ անուշ գիշեր
Հայոց աշխարհին հովանին արկեր,
Եւ գեղածիծաղ աստեղք իյերկնից՝
Հայրենեաց մերոց գըլեն ժամս հեշտից :
Զովուկ մէկ փըշէր սիւք ծաւալ ծաւալ,
Զառուակին սահէր ջուր թաւալ թաւալ .
Տերեն ու ծաղիկ սարսին հեզ իհեզ,
Կաղզուրին իցող ախոք տօթակէզ : —
Անուշակ այնպէս եւ խաղաղ գիշեր՝
Ո՛հ, ինչո՞ւ սակաւ են ունել Հայեր .
Ինչո՞ւ ոչ նոյնպէս ազնւո՞ւն, անվրդով՝
Ոչ քունն է թեթեւ՝ ոչ վաղն ապահով :
Ինչո՞ւ ոչ նոյնպէս միշտ իրենց երկիր
Չեն դըրեր ըզգլուխս ինինջ հեշտակիր . . .
Վահ . . . ինչո՞ւ ինձ պէս պանդուխտ վըշտագին,
Խեղճ Հայեր, հանգիստ գիշեր մը չունին . . .

Ինչո՞ւ... — լըռեցէք խորհուրդք տըրումութեան,
 Մի՛ զիմ մի՛ խռովէք միշտ սիրտ եւ ըզձայն,
 Թէ՛ ներկայս՝ Հայուն տայ միշտ արտասուել՝
 Թողէք գէթ ժամ մի յանցելոյն վայել:
 Գէթ ժամ մի թողէք որ պանդուխտ գերին
 Մոռնայ իւր այժմու վիճակ ցաւագին.
 Գէթ ժամ մ՝ ինախնիս փոխուի փառաշատ,
 Գէթ ժամ մի ծըծէ՛, ժամ մի զօգն ազնատ:

Բ.

Յարքունական ապարանից պատըշգամ
 Քաջն Արտաւազդ անքուն նըստել էր յայն ժամ.
 Եւ իխաղաղ յայն իհանգիստ աշխարհին՝
 Զըւարթանայր սիրտ ազգախնամ արքային:
 Եւ աչքն յերկին վերցընելով ասողալոյս՝
 «Ո՛ր տայր, ասաց, որ ըզհանգիստ այս ժամոյս
 Մըշտաշընորհ կարէի տալ հայրենեաց,
 «Թէ եւ արին իմ յայն պիտէր ընդ կենաց»:
 — Կեանք եւ արին՝ այո՛ պիտին, Արտաւազդ, —
 Ծանրը մէկ ձայն կըրկնեց նըմին աստուածազդ,
 Նա աստեղացն էր Մոգպաշտէ մեծ թարգման,
 Ոյր պատգամաց լըսէր բոլոր Հայաստան ⁽¹⁾:
 Զեռքի բարսմունքըն կարկառեց իյերկին,
 Եւ զապագայս խոր դիտելով ծերունին,
 «Արքայ, ասաց, կըտեսնես մեծ զայդ վարսամ՝
 «Որ իգըլուխ Մասեաց ծագէ իբոց ծամ»:
 Դարձոյց գըլուխն արքայ, տեսաւ հիահրաշ
 Կարակնաձեւ շողշողայր ասողըն խարտեաշ.
 «Քնւմդ աստուածոց — գոչեց — սո՛հ ինչ այդ նըշան,
 Արդեօք խընդայ թէ թընդայ իմս Հայաստան» ⁽²⁾:
 Խոր հաւաչեց անդ ծերունին, լուռ կեցաւ,
 Թըւէր թէ սիրտըն կեղեքի յահեղ ցաւ...
 Զայնիւ գողգոջ, «Աստեղք — գոչեց — լուսաբոց,
 «Հիմ՝ ձեզի պէս չէ մըշտալոյս բաղդ Հայոց...:
 «Ինչո՞ւ խաղաղ այս երջանիկ գիշերաց
 «Յանկարծ օրեր դան յաջորդեն խաւարաց,
 «Զինչ Կանգուարայ յարտեւանէն սեւաստուեր
 «Գոռ փոթորիկք թափեն խաւար եւ աւեր:

(1) „Իվերայ բազմացն կացուցանե զընտանի Արտաշիսի... Մոգպաշտե անուն”:

ԽՈՐԵՆ, Բ, խց.

(2) Արտաւազդայ երկրորդի օրերը մեծ վարսամ կամ գիսաւոր աստղ մը երևցաւ, ըստ աւանդութեան նին ասողարարիսից:

«Աւեր, ահա սպառնան աւեր յիմ երկիր . . .
 «Ահա լրտեմ՝ կոփին շրջթայք ծանրակիր . . .
 «Ահա ճայթին մահածորան աղեղներ . . .
 «Ահա շիահեն փայլակնացայտ սուսերներ . . .
 «Երկինք, արկէք ըզհովանիդ գըթութեան,
 «Պաշտպանեցէք խեղճն ու անոք Հայաստան . . .
 «Թըշուառ Հայուն հեծութեանց խնւ է երկին,
 «Երկինք փակեն զաչս որ իգութ չըշարժին:
 «Ահա գէղ գէղ զինչ հունձք ընկած Հայք խուր,
 «Դիակներով ձորեր փոխուել են բըլուր .
 «Ծըխուն հեղեղ այն բըլրերէն վէտ իվէտ
 «Թափի զեռայ, — սհ հայ արեան է այն գետ . . .
 «Ահա քաղաքք մեր բազմամարդ՝ անապատ . . .
 «Ո՞ւր Արմաւիր, սուր էք Մըծըին, Արտաշատ . . .
 «Քարանց գիտեմ կոյտ, այս մեր գահ տէրութեան . . .
 «Ո՛հ, ի՞նչ գահոյս փընտռեմ, մընայ Հայաստան:
 «Մընայ Հայաստան, մընացին հայ Հայրենիք,
 «Մընայ մէկ Հայ . . . — Ահա գունդ մը խեղճ գերիք՝
 «Որ ցան եւ ցիր՝ սիրտ եւ բազուկ իշրդթայն,
 «Ո՛չ անուն, ոչ երկիր ունին . . . այս է Հայն . . . »:
 — Այս է Հայն, այս . . . գոչեց անգուստ Արտաւազ,
 Ինչպէս առիւծ լիբիականն իյաւազ,
 Իվեր վազեց լի բարկութեամբ քաշեց սուր,
 Զայնն՝ որոտմունք էր, եւ փայլակ՝ աջոյն թուր:
 «Այս է Հայն, այս . . . սուր են Հայուն թըշնամիք,
 «Ցուցէք թափեմ իգլուխ նոցա հայ շանթիք,
 «Երգուեալ յազատ Մասիս, իրոց քո Վարսամ՝
 «Որ վրէժն առնում Հայոց, կտորեմ ըզշրջթայն »:
 Այն հայկական որոտընդոստ բարբառէն
 Իբր ինոր սիւք արծարծի դից մարգարէն .
 Սպազատես աչք իւր ցոլան վառ իվառ,
 Հայրենասէր սիրտըն տրոփէ վեր իվար:
 «Ո՞վ է այս Հայ զինեալ իսուր ահաւոր,
 «Խըրոխտ ճակտէն դա երեւի թագաւոր,
 «Որ հայրենեաց կարկառէ զաջ իւր պաշտպան,
 «Երկինք ըզնա կընքեն Հայոց վրիժահան:
 «Ահա իսեաւն իւր բոցաշունչ վերասլաց՝
 «Շանթ թափելով ճախրէ իսարս անդ Մասեաց .
 «Այն օթեւան է դից իվիհս անդընդոց . . .
 «Զինչ այս . . . պատեց ըզնա յանկարծ ամպ եւ բոց . . .
 «Հայեր, աւուրքն այն այս գան գերութեան .
 «Բայց երբ տեսնէք զԱրտաւազդայ մեծ վարսամ՝
 «Բացէք սըրտերդ իյոյս, երկինք առնեն աղբ,
 «Ահա կենէ Մասեաց վըհէն Արտաւազդ:

«Վրբէժ — գոչէ — վրբէժ, վրբէժ, լի վրբէժ...
 «Արեանց Հայոց տոյժ պահանջէ բիւրավէժ.
 «Աւետիս, քաջին բաղուկ վրիժահան
 «Ահա կանգնէ զիմ ցանկալի Հայաստան:
 «Երանի որ յայն օրեր ծընանին,
 «Եւ տեսանեն զազատութիւնն աղգային...
 «Իսկ ես՝ քաջեմ թըշուառ գըլուխս խապան,
 «Թող չոր ոսկերքս յայնժամ հողուն տակ խայտան»:
 Ասաց, լըռեց խորհրդաւորն այն բարբառ,
 Ու գիշերուանն ծածկեցաւ իխաւար,
 Մինչ խորասոյց յիւր իխորհուրդս Արաւաղդ,
 Կարծէր լըսել գեռ եւս ըզձայնն աստուածաղդ:
 Իսկիւր յանկարծ դարձոյց աչքերն առ վարսամ,
 «Ո՛վ հրաճածանչ — գոչեց — երկնից ինձ պատգամ,
 «Քանջ է, երթամ ահա ծածկել իմասիս,
 «Մինչեւ Հայոց երկրորդ անգամ դու ծագիս»:

Գ.

Աւաւօտեան խաղաղական լըռութիւն
 Լուծաւ յանկարծ իշեփորին շառաչիւն.
 «Ազատք Հայոց ելէք իձի, առէք ղէն,
 «Արքայն Հայոց յորս ելանէ ասպաղէն»:
 Ազատք Հայոց ելին իձիս օդապար,
 Իզրահ իղէն վառին խոպան պար իպար.
 Եւ ճանապարհք Արտաշատայ դըզըրդին
 Խորովական գովիւն քաջացն այն գընդին:
 Իսկ ինքն արքայ ըզլուսացին արկեալ զարդ,
 Երբ առ իգլուխ եւ զոսկեթագ սաղաւարտ,
 Համբոյր տըւաւ — վերջին էր այն — սիրուհւոյն,
 Եւ գըգուելով ըզվարդահոյլ այտ նորուն,
 «Ո՛հ, բաժնըլիմ — ասաց — իքէն Երանեակ...»
 Եւ Երանեակ փարեալ բաղկօքն իմանեակ,
 «Ա՛հ, շոյտ դարձիր, տէր իմ — ասաց — լամուսին,
 «Դարձիր ո՛հ շոյտ իգիւրի կարօտ քո հարսին»:
 Եւ արցունքներ իւր յորդէին շիթ առ շիթ...
 Խեղճ Երանեակ, կարծես փափուկ քո ոգիդ
 Էր նախաղգած թէ այն անգամ էր յետին
 Որ ցօղք աչացդ ընկնէր իծոց քո փեսին: —
 «Ո՛ր մոռնար զիս», կըրկնեց արքայ ոգեմուռնչ,
 Կամէր յետին տալ ըզբարեւ... գելաւ շունչ.
 Փըրցուց կըրծէն մի լուսավառ ադամանդ,
 Պաղաւ, նետեց հարսին, սրացաւ քան ըզշանդ:
 Ոստեաւ խեւան իւր ամէհի մըրըրկոտ,
 Փոշին դիզաւ ամպ, դըզըրդէր թունդ որոտ,
 Արշաւասոյր քաջք յեկեւել վարդէին,
 Եւ քաջ արքայն էր միշտ քաջացն առաջին:



Արտաւազ Բ.

Դ.

Գոռաց փող կերկեր
 Խիզախ քաջալեր ,
 Ճախրեն սուրան ձիք
 Թօթափեալ շանթիք ,
 Եւ փառաց վակժոյժ
 Քաջք առնուն աշխոյժ :

Դափր եւ խրրխրնջիւն ,
 Որսորդաց գոչիւն ,
 Բարակաց հաջիւն ,
 Էրէոյ բաջիւն ,
 Զինուց շառաջիւն ,
 Աղեղանց պայթիւն ,
 Շրուինդ ընդ բոմբիւն ,
 Անդ յընդոստ թընդիւն ,
 Զանտառ , ձոր եւ լեռ
 Յորոտ դըղըրդէր :

Անդ քաջք քան ըղբաջ
 Խիզախեն յառաջ ,
 Ոչ մայրիք՝ մացառք ,
 Ոչ խորք եւ կամ սարք
 Զարիս քաջալանջ
 Ընկըրկեն նըհանջ :

Արքայն շահատակ՝
 Իւրոցն օրինակ ,
 Երեցըս լըցոյց
 Կապարճ մահարբոյց ,
 Երեցս ըղբըրինս
 Պարպեց ահագինս :

Դէզ դէզ անասունք
 Ընկնին արագունք ,
 Այլք փախչին զրահեռ ,
 Մահ հասանէ հեռ .
 Ոչ եւս այլ բաւեն
 Մայրիք յապաւէն ,
 Վաղվազեն խուճապ
 Անյոյս խաղանապ ,
 Եւ խուր փրքին
 Թաւալ տապալին :

«Իվեր, գոչեց Արտաւազդ, անք աղեղանց,
«Կրտսնէք զայդ փախրտտական ջոկ եղանց,
«Ահա թեթեւ սուրան Մասեաց խաւեր,
«Օհ ետեւնէն գիմեմք եւ մեր, իմ՝ քաջեր»:

Քաջերն ըզկուշտ երիվարաց մըտրակեն,
եւ արքային ըզհետ իվեր արշաւեն,
եւ լըռութիւնք բազմադարեան սուրբ Լերին
Զայն առաջին իշուինդ քաջաց գըղըրդին:

Մէն մի փրքին թռուցեալ իհայ աղեղանց
Հար շեշտակի զմէն մի ճապուկ յայն եղանց,
եւ պըղընձի շեփորն ինուագ յաղթական
Մասեաց խաւոս որսոց փողեց ըզվախճան:

Ե.

Ճոխ աւարաւ քաջերն իմի համագունդ
Հասեալ կային վրհի մը քով խորանդունդ,
Ահեղ ժայռեր, ուր չէր՝ յայնչափ դարուց հին՝

Յանգըզնեալ ոտք մահացունին:

Այն բարձրերէն ըզմայլէին նայելով
Հայոց աշխարհըն ծաւալեալ անլըրդով,
Շէնք եւ քաղաք եւ արտօրէք եւ հովիտ

Շողշողային խիտ առ խիտ:

«Ո՛վ երջանիկ մեր Հայրենիք սիրեցեալ»,
Գոչեց արքայ՝ ըզլըռութիւն ընդհատեալ,
եւ քաջքն Հայոց անդ կըրկնեցին անձկալիք,

«Ո՛վ երջանիկ Հայրենիք»:

Զայն ցընծալից բարբառ գոչեն երեքնեն,
Կարծես սըրտերն ընդարձակին իծոցէն,
եւ արձագանդք գոռան յազասն իՄասիք,

«Ո՛վ երջանիկ Հայրենիք»: —

Սակայն յանկարծ մըթնի ճակատ արքային,
Ինչպէս յանկարծ իսեւաստուեր ամպ՝ երկին.
«Ո՛հ մանաւանդ — հեծեց — լացէք սիրելիք,

«Ո՛վ մեր թըշուստ Հայրենիք»:

«Թըշուստ, որ զայս իւր հանգըստեան կարճ օրեր
Պիտի տուժէ երկայնագոյն, ո՛հ, դարեր,

«Այս ամէն փառք, քաղաքք այդ պերճ եւ բերդք ձեր

«Տապալեսցին հիմն իվեր: . . .

«Ազնաք Հայոց, պարծանք Հայոց աշխարհին,
«Գիտէք որդւոցդ ինչ բազդ կընքեալ է երկին.
«Ահ, ոչ ըզհարց փառք՝ ոչ ըզգանձ՝ ոչ երկիր,

«Այլ շըղթաներ ծանրակիր»: . . .

Լըռեց արքայ, եւ քաջք Հայոց լուռ կային,
Աչքեր լըցուած եւ սեւեռեալ իգետին,
Կարծես տըխուր բազդի աւուրց մեր պատկեր
Նոցա գիմաց նըկարէր:

Հեծաւ արքայ, կապարճ ուզեց նետալից,
 Զըգեց իւր ուս, վահանն առաւ փառակից.
 Պընդեց ըզսուր, ճօճեց նիղակն ահագին,
 Եւ նայեցաւ իյերկին.

«Քաջէր — գոչեց — երկինք կոչեն զԱրտաւազդ,
 «Իդից հրաւէր՝ թագաւոր ձեր է պատրաստ.
 «Երթամ լինել աղաչաւոր անմահից

«Գրթալ Հայոցդ իմ բաղդից:
 «Ողջամբ կացէք... երթայք պատմել Հայրենեաց
 «Թէ Արտաւազդ զանձն իւր իրեն նըւիրեաց.
 «Երթայք ասել թէ իխաւար գերութեան
 «Երբոր հեծէ Հայաստան,

«Այն խաւարէն աչքերդ յերկին վերուցէք.
 «Հոն երբ ծագեալ զիմ մեծ վարսամ տեսանէք,
 «Խրախոյս առէք, վերջ է հասեր գերութեան,
 «Յնւշ Արտաւազդ վրիժահան:

«Գայ Արտաւազդ քակել կոտրել ըզըզթայս,
 «Յազատութիւն վրսեմ հանել բարձր ըզՀայս,
 «Գայ Արտաւազդ կանգնել ըզփառս հայկական,
 «Գայ նորոգել Հայաստան»: —

Ասաց, եւ աչքըն վառեցան բոցահրաշ,
 Եւ մինչ ազատքն Հայոց կային հիահրաշ,
 Իսոյլ նըշան հաւատարիմ իւր ետ շանց,
 Եւ ըզձիոյն եթող սանձ,

Ոստնոյր իվիհն արքայ դիմօք անխըռով,
 Եւ վերջին մի իւր քաջերուն նայելով՝
 «Ողջոյն — գոչեց — ձեզ եւ Հայոց բովանդակ,
 «Ողջոյն առ իմն երանեակ»: . . .

Ամպ սեւաստուեր յանկարծ իջաւ հրաթաղանթ,
 Ծածկեց ըզվիհն որոտալով բոցեռանդ.

Զանվախ քաջացն այն սիրտ սարսափ անդ կալաւ,
 Աչացն արցունք պաղեցաւ . . .

Եւ դառնային լըռիկ մընջիկ տըխրադէմ
 Անգէտք թէ լսն զիւրեանց արքայն թէ տօնեն,
 Եւ դեռ յականջս հընչէր քաջին յուսոյ բան,
 «Յնւշ Արտաւազդ վրիժահան»:

2.

Օ՞ն Հայեր, ճն յերկին զաչըս ձեր տարէք,
 Գուշակութեանցն հասաւ ժամ.

Ասացէք ինձ, Հայոց որդիք, երբ տեսնէք
 ԶԱրտաւազդայ մեծ վարսամ: